ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, Երևան, 0095, Բաղրամյան 19, +374 11 513264, hakob.nazaryan@parliament.am

«1» դեկտեմբեր, 2017թ.

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության 24.11.2017 թվականի հարցման՝ տեղեկացնում եմ, որ համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ազգային ժողովի վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում իրականացվել է ինչպես քաղաքացիների ընդունելություն, այնպես էլ գրավոր և բանավոր դիմումների արձագանքում:

Հանդիսանալով թիվ 3 ընտրատարածքի վարկանիշային կարգով ընտրված պատգամավոր, համայնքի բնակիչների հետ պարբերաբար հանդիպումներ եմ ունեցել համայնքում մշտապես գործող իմ գրասենյակում: Քաղաքացիների դիմումները վերաբերել են ամենատարբեր ոլորտներին՝ առողջապահական, սոցիալական, կրթական և այլն: Բոլոր դեպքերում ճշգրիտ ժամկետներում եղել է համապատասխան արձագանքը:

Բազմաթիվ քաղաքացիներից ստանալով բողոքներ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ընդհանուր գործընթացի վերաբերյալ՝ Ազգային ժողովի վեցերորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում՝ կառավարության հետ հարց ու պարասխանի ժամանակ, իմ կողմից եղել է անդրադարձ և հնչեցվել է հարց՝ ուղղված այդ գործընթացի արմատային խնդիրներին: Ինչպես նաև Սիսիանի տարածաշրջանի որոշ համայնքների (Ախլաթյան, Որոտան, Տոլորս, Նորավան, Ույծ) բնակիչներ իրենց բողոքն են ներկայացրել խմելու ջրի, միջհամայնքային ճանապարհների նորոգության, համայնքները սպասարկող տրանսպորտի, ոռոգման ջրի, բերքի մթերման խնդիրների վերաբերյալ: Նշված հարցերը իմ կողմից բարձրացվել են կրկին կառավարության հետ հարց ու պարասխանի ժամանակ:

«Ծառուկյան» խմբակցության պատգամավորների հետ միասին հանդիպումներ եմ ունեցել «Նաիրիտ» գործարանի աշխատակիցների հետ, անհատ տաքսիստների խմբի հետ, որոնց ընթացքում հնչեցված բողոքները ունեցել են մեծ արձագանք խմբակցության կողմից, և քննարկված խնդիրները, հարցերը գործընկերներս բարձրացրել են Ազգային ժողովի լիազումար նիստերի ընթացքում:

Իմ կոնտակտային տվյալները հասանելի լինելով հանրությանը՝ հնարավորություն են տալիս մշտական կապի մեջ լինել քաղաքացիների հետ:

Բազմաթիվ այլ դեպքերում խնդիրները չեն առնչվել համապատասխան իրավական ակտերով սահմանված պատգամավորի լիազորություններին («Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եւ Ազգային ժողովի աշխատակարգով):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՀԱԿՈԲ ՆԱԶԱՐՅԱՆ

0019 ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան 19, +374 11 513264,
hakob.nazaryan@parliament.am
www.parliament.am